



Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահող-դատավոր	Մ.Հարությունյան
Քարտուղար	Ռ.Թամարյան
Մեղադրող-դատախազ	Ն.Օսյան
Ամբաստանյալ Ա.Խոյեցյանի շահերի պաշտպան	Գ.Հարությունյան
Ամբաստանյալ Ա.Թադևոսյանի շահերի պաշտպան	Ռ.Հակոբյան

2014թ. դեկտեմբերի 26-ին, Վանաձոր քաղաքում, դռնբաց դատական նիստում, արագացված դատական քննության կարգով քննեց գործն ըստ մեղադրանքի՝

Արգամ Դերենիկի Խոյեցյանի՝ ծնված 07.06.1974թ. Սպիտակ քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին են՝ 23.06.2009թ. ծնված Դերենիկ Արգամի Խոյեցյանը և 25.05.2002թ. ծնված, երկրորդ խմբի հաշմանդամ Գևորգ Արգամի Խոյեցյանը և երկրորդ խմբի հաշմանդամ կինը, աշխատում է ՀՀ Լոռու մարզպետարանի Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունում՝ որպես մասնագետ, բնակվում է քաղ. Սպիտակ, Ս.Ավետիսյան 12/4 հասցեում, փաստացի արգելանքի տակ է 30.09.2014թվականից, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 1-ին մասով,

Աղասի Արեստակեսի Թադևոսյանի՝ ծնված 02.03.1963թ. Լոռու մարզի Լեռնավան գյուղում, ազգությամբ՝ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին է գտնվում 19.12.2000թ. ծնված դուստրը, աշխատում է Լեռնավանի համայնքապետարանում՝ որպես առաջատար մասնագետ, բնակվում է Լոռու մարզի Լեռնավան գյուղում, փաստացի արգելանքի տակ է 01.10.2014թվականից, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-311¹ հոդվածի 1-ին մասով.

Գործով ձեռք բերված ապացույցներով պարզվել է հետևյալը.

Սպիտակի քննչական բաժնի քննիչ Գ.Մինասյանը, քննարկելով Երինազ Նորիկի Չախալյանի գրավոր հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը, 30.09.2014թվականին որոշում է կայացրել Արգամ Խոյեցյանի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու դեպքով հարուցել քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 1-ին մասով, ընդունել վարույթ և կատարել նախաքննություն:

03.10.2014 որոշում է կայացվել Արգամ Դերենիկի Խոյեցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա չհանդիսանալով պաշտոնատար անձ, որպես հանրային ծառայող, Լեռնավան համայնքի համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ Աղասի Թադևոսյանի օժանդակությամբ, պահանջել և ստացել է ապօրինի վարձատրություն:

Այսպես՝

Լոռու մարզի Լեռնավան համայնքի բնակիչ Նորիկ Չախալյանը 2014թվականի հունվար ամսին դատերը՝ նույն համայնքում հաշվառված և փաստացի Արմավիրի մարզի Հացիկ գյուղում բնակվող, Երինազ Չախալյանին, Լոռու մարզի Սպիտակի սոցիալական



ծառայության տարածքային գործակալության նպաստառուների ցուցակում ընդգրկելու և նպաստ տրամադրելու համար, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2007թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 261 հրամանով, Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետ, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Արզամ Խոյեցյանին միջնորդելու հարցով դիմել է Լեռնական համայնքի համայնքապետարանի առաջատար մասնագետ Աղասի Թաղևոսյանին: Վերջինս, ուղղակի կապ ապահովելով և խոչընդոտներ վերացնելով, նույն ամսին, Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային շենքում հանդիպել է Արզամ Խոյեցյանին ու պայմանավորվածություն ձևակերպել իր լիազորությունների շրջանակներում՝ 110.000 ՀՀ դրամ ապօրինի վարձատրության դիմաց: Երինազ Չախալյանին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու (փաստագրելու), վերջինիս տրամադրած տեղեկատվությունները չստանալու՝ նրա կողմից Լեռնական համայնքում մշտապես չբնակվելու հանգամանքն անտեսելու վերաբերյալ: Այնուհետև Արզամ Խոյեցյանը Աղասի Թաղևոսյանի միջոցով Նորիկ Չախալյանի հետ ունեցած նույն պայմանավորվածության համաձայն, 2014թվականի հունվար, հունիս և սեպտեմբեր ամիսներին, իր աշխատասենյակում միասնական դիտավորությամբ ստացել է համապատասխանաբար 50.000 և երկու անգամ 30.000-ական դրամ գումար ապօրինի վարձատրություն և առանց տրամադրված տեղեկություններն ստուգելու՝ Երինազ Չախալյանին ընդգրկել է նպաստառուների ցուցակում և տրամադրել անապահովության նպաստ:

04.10.2014 որոշում է կայացվել Աղասի Արեստակեսի Թաղևոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311¹ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա համագործակցի Նորիկ Չախալյանի խնդրանքով 2014 թվականի հունվար ամսին Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալության շենքում հանդիպել է ՀՀ Լոռու մարզպետարանի Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետ, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Արզամ Խոյեցյանին և վերջինիս հետ ուղղակի կապն ապահովելով՝ ապօրինի վարձատրություն ստանալու համար, պայմանավորվածություն է ձևակերպել 110.000 ՀՀ դրամ ապօրինի վարձատրության դիմաց նրա լիազորությունների շրջանակներում Լեռնական համայնքում հաշվառված և փաստացի Արմավիրի մարզի Հսցիկ գյուղում բնակվող Երինազ Չախալյանին ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու (փաստագրելու), վերջինիս տրամադրած տեղեկությունները չստուգելու՝ նրա կողմից Լեռնական համայնքում մշտապես չբնակվելու հանգամանքն անտեսելու վերաբերյալ: Այնուհետև Աղասի Թաղևոսյանը 2014 թվականի հունվար, հունիս և սեպտեմբեր ամիսներին Երինազ Չախալյանի ծնողների՝ Նորիկ և Արմանուշ Չախալյանների տված, համապատասխանաբար 50.000 և 30.000-ական դրամ ապօրինի վարձատրությունը, խոչընդոտներ վերացնելով մաս-մաս փոխանցել է Արզամ Խոյեցյանին, ով առանց տրամադրված տեղեկությունները ստուգելու՝ Երինազ Չախալյանին ընդգրկել է նպաստառուների ցուցակում՝ այդ կերպ օժանդակելով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն, իսկ Արզամ Խոյեցյանն էլ իր հերթին առանց տրամադրված տեղեկությունները ստուգելու՝ Երինազ Չախալյանին ընդգրկել է նպաստառուների ցուցակում:

17.12.2014թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան:

Մինչ դատաքննությունն սկսելը, ամբաստանյալներ Արզամ Դերենիկի Խոյեցյանը և Աղասի Արեստակեսի Թադևոսյանը միջնորդեցին դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեցին, որ միջնորդությունը ներկայացրել են կամավոր, խորհրդակցել են պաշտպանի հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննությունն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, համաձայն են մեղադրանքի հետ:

Մեղադրական եզրակացությունում մեղադրող-դատախազը չի առարկել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ և 375²-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննությունն անցկացնելու մասին:

Դատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գտնում է, որ ամբաստանյալ Արզամ Դերենիկի Խոյեցյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 1-ին մասով, իսկ ամբաստանյալ Աղասի Արեստակեսի Թադևոսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-311¹ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Դատարանն ամբաստանյալ Արզամ Դերենիկի Խոյեցյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել լիովին, գղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, խնամքին են՝ 23.06.2009թ. ծնված Դերենիկ Արզամի Խոյեցյանը, 25.05.2002թ. ծնված, երկրորդ խմբի հաշմանդամ՝ Գևորգ Արզամի Խոյեցյանը և երկրորդ խմբի հաշմանդամ կիներ և, որ բնութագրվում է դրական:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Հաշվի առնելով գործի հանգամանքները, ամբաստանյալներ Արզամ Դերենիկի Խոյեցյանի արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, դատարանը գտնում է, որ վերջինիս նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով՝ զրկելով հանրային ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:

Դատարանն ամբաստանյալ Աղասի Արեստակեսի Թադևոսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել լիովին, գղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, խնամքին է գտնվում 19.12.2000թ. ծնված դուստրը և, որ բնութագրվում է դրական:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Հաշվի առնելով գործի հանգամանքները, ամբաստանյալներ Աղասի Արեստակեսի Թաղևոսյանի արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, դատարանը գտնում է, որ վերջինիս նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով՝ զրկելով համայնքային ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:

Դատարանն անդրադառնալով ամբաստանյալներ Արզամ Դերենիկի Խոյեցյանի և Աղասի Արեստակեսի Թաղևոսյանի նկատմամբ, որպես խափանման միջոց ընտրված կալանավորման հարցին, գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննության առնելով ապացույցների տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳ վարչությունից թիվ 10/1-6-3468 գրությամբ ստացված լազերային սկավառակը, „Դ-Տեէկոմ“ ՓԲ ընկերությունից SU/4964/181111/5104 գրությամբ ստացված լազերային սկավառակը, Արզամ Խոյեցյանին պաշտոնի նշանակելու մասին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 07.09.2007թվականի թիվ 261 հրամանը, Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունից 06.10.2014թվականին ստացված թիվ 494 համարի գրությունը, ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշման „Շտապհիթների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու)” կարգը, պետք է թողնել քրեական գործին կից:

Վերոգրյալի հիման վրա ու ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360, 375³ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Արզամ Դերենիկի Խոյեցյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3/երեք/ ամիս ժամկետով՝ զրկելով հանրային ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից 1/մեկ/ տարի ժամանակով:

Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Պատժի սկիզբը հաշվել 2014 թվականի սեպտեմբերի 30-ից:

Խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Աղասի Արեստակեսի Թաղևոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311¹ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3/երեք/ ամիս ժամկետով՝ զրկելով համայնքային ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից 1/մեկ/ տարի ժամանակով:

Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Պատժի սկիզբը հաշվել 2014 թվականի հոկտեմբերի 01-ից:

Խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Արզամ Խոյեցյանի մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերված և վերցված 101.000/մեկ հարյուր մեկ հազար/ դրամ և Աղասի Թաղևոսյանի մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերված և վերցված 436.000/չորս հարյուր երեսունվեց հազար/ դրամ գումարները վերադարձնել համապատասխանաբար Արզամ Դերենիկի Խոյեցյանին և Աղասի Արեստակեսի Թաղևոսյանին:

Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ ՀՀ ռատիկանության ԿՀԴՊԳ վարչությունից թիվ 10/1-6-3468 գրությամբ ստացված լազերային սկավառակը, „Ղ-Տելեկոմ“ ՓԲ ընկերությունից SU/4964/181111/5104 գրությամբ ստացված լազերային սկավառակը, Արզամ Խոյեցյանին պաշտոնի նշանակելու մասին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 07.09.2007թվականի թիվ 261 հրամանը, Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Սպիտակի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունից 06.10.2014թվականին ստացված թիվ 494 համարի գրությունը, ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշման „Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու)” կարգը, թողնել քրեական գործին կից:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում, բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395 հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի:

ԴԱՏԱՎՈՐ _____ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծանոթություն.

Սույն գործով վերաքննիչ բողոք չի ներկայացվել և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 27.01.2015թ.-ին:

ԴԱՏԱՎՈՐ _____ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ